

ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուրարտական սեպագիր աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անցյալում արդեն հրատարակված, երբեմն էլ նույնիսկ բազմիցս վերահրատարակված արձանագրությունների տվյալների համակողմանի բացահայտումը դեռևս չի կարելի սպառված համարել: Դա վերաբերում է, առաջին հերթին, եղծված տեքստերին, որոնց մանրազնին հետազոտությունը հաճախ կարող է տեղիք տալ շատ սուեղծվածների: Այդպիսի գրավոր հուշարձանների շարքը, իրավամբ, պետք է դասել նաև Արգիշտի II-ի՝ Հադիում (Արձեշի մոտ) վաղուց ի վեր հայտնաբերված պակասավոր արձանագրությունը¹:

Վերոհիշյալ հանգամանքը բացատրվում է Հադիի արձանագրության տեքստի ոչ միայն ծայրաստիճան անմխիթար վիճակով, այլև առկա նյութի ոչ բավարար քննությամբ: Դործը բարդանում է և այն կապակցությամբ, որ առանձին փաստերի բացահայտման ժամանակ տեղ են գտել զգալի տարակարծություններ: Նշենք նաև, որ մեզ հետաքրքրող արձանագրության որոշ հատվածների ճշտմանը և մեկնաբանմանը նպաստում են հետագայում հայտնաբերված ուրարտական գրավոր հուշարձանները:

Դառնանք Հադիի ուրարտական արձանագրության այն հատվածներին, որոնք, մեր կարծիքով, կարիք ունեն նոր ընթերցումների և մեկնաբանությունների:

1. Մադբանֆի բանաձևի բնթեքցման շուրջը

Խալդի գերագույն աստծո կողմից ուրարտական Արգիշտի, Ռուսայի որդի, թագավորին ուղղված մաղթանքի բանաձևը, ինչպես հայտնի է, գրավում է Հադիի արձանագրության երեսի կողմի 5—12 տողերը:

Հինգերորդ տողում Մ. Ծերեթելին և Դ. Մելիքիշվիլին ընթերցում են ma-ni-ni ^DHal-di-[ni be-di-ni], իսկ Ֆ. Վ. Քյոնիգը՝ ma-ni-ni ^DHal-di [bi-di-ni]:

bedi բառավերջում ni նշանի վերականգնման համար, որ առաջարկում են Ծերեթելին և Մելիքիշվիլին, տվյալ տողի տուժած հատվածում չկա բավարար տեղ: Իսկ Քյոնիգի ընթերցումը ուրարտական արձանագրությունների համանման տեքստերի տվյալներով չի արդարացվում. ni նշանը ^DHaldi-ի վերջում, առանց որևէ բացառության, օրինաչափորեն հանդես է գալիս բոլոր հայտնի դեպքերում: Ելնելով դրանից, Քյոնիգի (ինչպես նաև Ծերեթելու և

¹ M. de Tseretheli, L'inscription de la stèle de Hagi, „Revue d'assyriologie et d'archéologie orientale“, 1958, LII, № 1, էջ 29—35; Г. А. Мелникшвили, Урайтские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН), արձանագրություն 276; F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, I—II, Graz, 1955—1957 (այսուհետև՝ Handbuch), արձանագրություն 124:

Մելիքիշվիլու) առաջարկած գիտական տառադարձման մեջ անհրաժեշտ է վերացնել ու նշանը՝ bīdi-ի վերջում, քանի որ Հաղիի արձանագրության 5-րդ տողի տուժած հատվածում տեղ չկա երկու ու-երի համար (²Haldi-ի և bīdi-ի վերջում):

Վերը բերված փաստարկների հիման վրա քննարկվող 5-րդ տողում, արձանագրության էստամպի լուսանկարի համաձայն², մենք առաջարկում ենք ma-ni-ni ³Hal-di-[ni bi-di] «Թող լինի խալդի աստծո կողմից» ընթերցումը: Այդպիսի գրելաձև հենց հանդիպում է Ռուսա II-ի կարմիրբլուրյան հայտնի արձանագրության մեջ³: Այդ թագավորը, ինչպես գիտենք, Հաղիի արձանագրության կազմողի՝ Արգիշտի II-ի որդին է: Ի դեպ, Կարմիր-բլուրի արձանագրության մաղթանքի բանաձևը, ինչպես կտեսնենք ներքևում, Հաղիի արձանագրության նմանօրինակ բանաձևի հետ ունի նաև մի ամբողջ շարք այլ ընդհանրություններ:

Հետևյալ՝ 6—7-րդ տողերը ընթերցման համար ոչ մի դժվարություն չեն ներկայացնում: Այստեղ առկա են թագավորի անունը և հայրանունը. տուժած են միայն նրանց վերջավորությունները, որոնք Մերեթելին և Քյոնիգը երկու դեպքում էլ վերականգնում են -[i-e], իսկ Մելիքիշվիլին՝ միայն -[e]: Ելնելով այդ տողերի վերջի՝ տուժած հատվածների զգալի չափերից, կարծում ենք, միանգամայն արդարացի պետք է համարել Մերեթելու և Քյոնիգի ընթերցումները՝ ¹Ar-giš-ti-[i-e] ¹Ru-sa-a-lī-ni-[i-e] «Արգիշտիին, Ռուսայի որդուն»:

Հաղիի արձանագրության մաղթանքի բանաձևի համար բավականաչափ մեծ հետաքրքրություն է ներկայացնում 8-րդ տողի տեքստը, որը Մերեթելին ընթերցում է a-ru-ú-še-e ku-[ú-i/e], Մելիքիշվիլին՝ a-ru--ú-še-e kú-[ú-i] իսկ Քյոնիգը՝ a-ru-ú-še-e e-ku-ú-še:

Մերեթելու և Մելիքիշվիլու ընթերցումների առթիվ, որոնք, ինչպես երևում է համընկնում են համարյա ամբողջությամբ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ kui (տարբերակ՝ kue) «հենց», «նույնիսկ», «նույնպես», «ինչպես նաև»⁴ բառը (ուժեղացուցիչ մասնիկը) ուրարտական արձանագրությունների մաղթանքի բանաձևերում երբեք չի հանդիպում: Տեքստերը, kui (kue) հիշատակությամբ⁵, Հաղիի արձանագրության քննարկվող հատվածի հետ այլ ընդհանրություններ ևս չունեն: Հետևաբար, 8-րդ տողի վերը առաջարկված kui/kue ընթերցման հետ դժվար է համաձայնվել, առավել ևս, եթե հաշվի առնենք տվյալ տողավերջում բավականաչափ լավ պահպանված še նշանը: Հիմք չկա նաև aruše «ընծա», «բարօրություն» վերացական գոյականի վերջում տեսնել լրացուցիչ e: Ինչ վերաբերում է Քյոնիգի a-ru-ú-še-e e-ku-ú-še ընթերցմանը, ապա նախ, հարց է առաջանում, թե ինչպես են ծագել aruše ի վերջի և ekuše-ի սկզբի երկու e-երը, այն դեպքում, երբ արձանագրության լուսանկարի վրա առկա է միայն մեկ այդպիսի նշան: Այնուհետև, ku-ի և

² C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldicarum, Berlin und Leipzig, I, 1928 (այսուհետև՝ CICH), աղյուսակ XXXIX, արձանագրություն 149:

³ Н. В. Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966 (այսուհետև՝ НУП), էջ 38, տեքստ I, տող 4—5:

⁴ Г. А. Меликишвили, УКИ, էջ 400:

⁵ УКИ, 19=Handbuch, 9, ուրարտ. տեքստ, տող 35. УКИ, 27=Handbuch, 10, տող 27. УКИ, 155=Handbuch, 103, սյունակ С, տող 28. УКИ, 280=Handbuch, 129, տող 12:

še-ի միջև բացարձակապես ոչինչ չի երևում, ուստի դժվար է վստահորեն (նույնիսկ առանց մասնակի վերականգնման) ընթերցել ն: Բացի այդ, ekuše(?) բառը վկայված չէ ուրարտական այլ տեքստերում, թեկուզև Քյոնիգը, ի տարբերություն Մերեթելու և Մելիքիշվիլու, ընդհանուր առմամբ իրավացի է, երբ այստեղ ևս (išpušē-ի, uiguše-ի և այլնի նման) հակված է տեսնել ինչ-որ վերացական գոյական՝ še վերջավորությամբ:

Այսպիսով, եթե Հադիի արձանագրության 8-րդ տողի առաջին կեսում ընթերցենք a-ru-ú-še, ապա տեքստի շարունակության մեջ կմնա e-ku-[-...]-še: Եվ եթե համաձայնվենք Քյոնիգի e-ku-[ú?]-še վերականգնման հետ, ապա մեր արձանագրության մեջ առկա iš-pu-i-se-ն և այլ տեքստերի al-su-i-še-ն չեն բացառում նաև, ասենք, e-ku-[i?]-še ընթերցման հնարավորությունը: Սակայն այս բոլորին, բնականաբար, որոշակի խոչընդոտներ է հարուցում ուրարտական այլ տեքստերում նման բառի իսպառ բացակայությունը:

Մյուս կողմից, e-ku-[-...]-še-ի վերականգնման կապակցությամբ, աչքի է զարնում e-ku-ri-e բառի առկայությունը Կարմիր-բլուրի սեպագիր աղյուսակներից մեկում⁶։ eku- տեղեկություններ մի այլ բառ ուրարտերենում, ցավոք, ավանդված չէ: Ելնելով ղրանից, մեղ թվում է, որ Հադիի արձանագրության 8-րդ տողում բացառված չէ նաև e-ku-[ri?]-še ընթերցման հնարավորությունը:

Հաջորդ՝ 9—10-րդ տողերում, էստամպի լուսանկարի համաձայն, առանց դժվարության ընթերցվում է iš-pu-i-še ul-g[u-ú-še]⁷ pi-su-ú-še al-su⁸-[še]⁹: Ինչպես երևում է բերված տողատակ ծանոթագրություններից, տեքստի հիշյալ տողերի ընթերցման մեջ մասնագետները լուրջ տարակարծություններ չունեն:

Բավականաչափ լուրջ տարակարծություններ նկատելի են արձանագրության հաջորդ, 11-րդ տողի ընթերցման և մեկնաբանման մեջ: Այսպես, Մերեթելին և Մելիքիշվիլին այստեղ ընթերցում են e-ia ar-tú-m[e DINGIRMEŠ] (ի դեպ, DINGIRMEŠ-ի վերջում Ծերեթելին ավելացնում է նաև še), իսկ Քյոնիգը՝ e-ia ar-di-[i-še]:

Առայժմ մի կողմ թողնենք նույնպես շատ կարևոր այն հանգամանքը, որ արձանագրության 11-րդ տողում բավարար տեղ չկա ո՛չ Մելիքիշվիլու, ո՛չ էլ, առավել ևս, Մերեթելու ընթերցումների համար: Ուշադրություն դարձնենք թերևս այն փաստի վրա, որ վերը բերված ընթերցումների համար ակներևաբար հիմք է ծառայել Ռուսա I-ի Թոփուզսուլայի երկլեզվյան արձանագրության հատվածներից մեկը¹⁰, որը, սակայն, ընդհանուր քիչ բան ունի Հադիի ար-

⁶ И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963 (այսուհետև՝ УПД), տեքստ N 7=УКII, 462, հակառակ կողմ, տող 12:

⁷ Մերեթելին առաջարկում է ul-gu-[u-se], Մելիքիշվիլին՝ ul-g[u-še], իսկ Քյոնիգը՝ ul-gu-ú-še ընթերցումը: Տուժած տեղը միանգամայն բավարար է ս նշանի վերականգնման համար:

⁸ Տս նշանը պահպանվել է համարյա ամբողջությամբ:

⁹ Մերեթելին այդ բառը ընթերցում է al-su-[še], Մելիքիշվիլին՝ al-[su-še], իսկ Քյոնիգը՝ al-su-i-š[e]։ Արձանագրության էստամպի լուսանկարի համաձայն, այստեղ հնարավոր չէ (նշանի վերականգնումը, ի դեպ, alsuše գրելաձևն էլ միանգամայն օրինաչափ է ուրարտական այլ տեքստերի համար ևս)։

¹⁰ УКII, 264, ուրարտ. տեքստ, տող 30:

ձանագրության քննարկվող հատվածի հետ: Մյուս կողմից, artume DIN-GIRMEŠ արտահայտությունը ընդհանրապես խորթ է ուրարտական արձանագրությունների մաղթանքի բանաձևերին:

Այդ դեպքում, այնուամենայնիվ, ինչո՞վ կարելի է բացատրել Ծերեթելու և Մելիթիշվիլու կողմից tñ-m[e] նշանների ընթերցումը այս տեքստի համար կարծեցյալ artume(?) բառում: Դրա համար «հիմք» է ծառայել որոշ շափով տուժած dī նշանը, որի առաջին կեսը («անկյունաձև» սեպը առաջին հայացքից տրոհված է թվում երկու մասի, որից հետո, ինչպես հայտնի է, առկա է նաև ուղղահայաց սեպ) ընթերցվել է որպես tñ, իսկ երկրորդ կեսը (առկա երկրորդ ուղղահայաց սեպի աջ կողմից սխալմամբ վերականգնվել է մեկ հորիզոնական սեպ)՝ որպես m[e]: Այդ բոլորը, ինչպես ակնառու երևում է, ոչ մի կապ չունի մեր տեքստի հետ:

Ինչ վերաբերում է Քյոնիգի առաջարկած ar-di-[i-še] ընթերցմանը, ապա այն լիովին համապատասխանում է և՛ մեր տեքստին, և՛ ուրարտական այլ արձանագրությունների մաղթանքի բանաձևերին. ardiše «իշխանություն», «հրաման», «կարգադրություն» բառը այդպիսի բանաձևերի անբաժանելի մասն է:

Հաղիի արձանագրության մաղթանքի բանաձևի վերջին, 12-րդ տողի ընթերցումը մասնագիտական գրականության մեջ հիմնականում տարակարծություններ չի հարուցում. այն սովորաբար տառադարձվում է ar-a-nī uš-[ma-a-še]¹¹ ձևով: Բացառություն է կազմում միայն ušmaše-ի փոխարեն uš-[ha-ni-tú-me] ոչ ընդունելի ընթերցումը Ծերեթելու կողմից: Այստեղ աչքի է զարնում միայն այն հանգամանքը, որ տվյալ դեպքում aranī-ն ուրարտական նման այլ տեքստերի arnī¹² «ուժ» բառի գրության տարբերակն է:

Այսպիսով, ելնելով տեքստի՝ վերը բերված շտկումներից, ուրարտական Արգիշտի II թագավորի Հաղիի արձանագրության մաղթանքի բանաձևի համար կարելի է առաջարկել հետևյալ գիտական տառադարձումը և թարգմանությունը.

- (5) ma-ni-ni ԾHal-di-[ni bi-di]
- (6) ¹Ar-giš-ti-[i-e]
- (7) ¹Ru-sa-a-ḫi-ni-[i-e]
- (8) a-ru-ú-še e-ku-[ri?]-še
- (9) iš-pu-i-še ul-g[u-ú-še]
- (10) pi-šu-ú-se al-su-[še]
- (11) e-ia ar-di-[i-se]
- (12) ar-a-ni uš-ma-a-še

«Թող լինի խաղի աստծո կողմից Արգիշտին, Ռուսայի որդուն, բարօրություն, ekuriše(?) (կամ՝ ekuše?), երջանկություն, կյանք, ուրախություն, մեծություն, ինչպես նաև ուժ, կորով»:

Վերջում անհրաժեշտ է նկատել, որ aruše ekuriše(?) և išpuiše վերացական գոյականները ուրարտական այլ տեքստերի մաղթանքի բանաձևերում

¹¹ ma, a, se սեպագիր նշանների հետքերը երևում են արձանագրության էստամպի լուսանկարի վրա:

¹² YKH, 171, 5. 172, տող 5:

չեն հանդիպում: Ինչ վերաբերում է հիշյալ տեքստի շարունակությանը, ապա այն համարյա ամբողջությամբ համընկնում է Կարմիր-բլուրի ուրարտական արձանագրության մաղթանքի բանաձևին¹³, որի կազմողը, ինչպես հայտնի է, Ռուսա II-ն է՝ Հաղիի արձանագրության Արգիշտի II-ի որդին:

2. LUipsuše շնկալոված բառը

Հաղիի արձանագրության երեսի կողմի 33-րդ տողը Մերեթելին ընթերցում է e-ú-e AMELURÊ'U šú-ú-[ki], Մելիքիշվիլին՝ e-ū-e LU[SI]PAD šú-ú-..., իսկ Քյոնիգը՝ e-ú-e LÜp-šú-ú-e:

Ի դեպ, Մերեթելին և Քյոնիգը բերված տեքստի eue-ն ընկալում են որպես շաղկապ («և», «ինչպես նաև»), իսկ Մելիքիշվիլին թողնում է առանց թարգմանության. ուրարտական արձանագրությունների իր ժողովածուի բառացանկում eue-ն նա տեղադրում է e'a=eia=eai շաղկապից մեկուսացված¹⁴:

Ինչ վերաբերում է AMÊLURÊ'Û = LU[SI]PAD¹⁵-ին, ապա Մերեթելին և Մելիքիշվիլին, բնականաբար, թարգմանում են «հովվապետ»: Իսկ դրա փոխարեն ընթերցված LUipsue-ն Քյոնիգը մեկնաբանում է (meinen) Helfern «(իմ) օգնական ներքին»:

Վերը առաջարկված ընթերցումների առթիվ հարկ ենք համարում նշել, որ AMÊLURÊ'Û = LU[SI]PAD վերծանությունը զուրկ է հիմքից: Նման ընթերցման դեպքում տեքստում, LU դետերմինատիվից (որոշիչից) հետո, պետք է լիներ pa և lu նշանների կոմբինացիան: Իրականում, Հաղիի արձանագրության էստամպի լուսանկարի համաձայն, LU դետերմինատիվից հետո սովյալ հատվածում թուկա է ip¹⁶ նշանը, որի ընթերցումը ոչ մի կասկածի ենթակա չէ և որից առաջ տեքստում որևէ տուժած հատված գոյություն չունի:

Անհրաժեշտ արդարացում չի գտնում նաև šú-ú-[ki] ընթերցումը Մերեթելու կողմից՝ Հաղիի արձանագրության քննարկվող տողի վերջում: Այդ բառը ուրարտական սեպագրերում հանդես է գալիս միանգամայն այլ կարգի տեքստերում¹⁷: Բացի այդ, ներքևում մենք դեռևս կտեսնենք, որ šú-ú նշանները (որոնցից հետո Մերեթելին վերականգնում է ki) հանդիսանում են մի այլ բառի շարունակությունը:

Այսպիսով, Արգիշտի II-ի արձանագրության 33-րդ տողում e-ū-e-ից հետո սուկա են LU և ip, իսկ այնուհետև՝ šú և ū: Տվյալ տողի վերջում, էստամպի լուսանկարի համաձայն, տուժած է մեկ նշան: Հետևաբար, այդ ամենը կարելի է արտահայտել հետևյալ ձևով՝ LUip-šú-ú-...:

Այս բոլորը, առանց տողավերջի տուժած նշանի, ճիշտ է նկատել միայն Քյոնիգը: Սակայն սովյալ բառի վերջում (տուժած տեղում), առանց որևէ

¹³ Н. В. Арутюнян, НУН, էջ 38, տող 4—5:

¹⁴ Г. А. Мелнкншвилл, УКН, էջ 392, 394:

¹⁵ Այստեղ առկա են միևնույն դետերմինատիվի և գաղափարագրի շումերական ու ակկադական ընթերցումները:

¹⁶ Հենց այդ ip-ն էլ Մերեթելին և Մելիքիշվիլին կարդում են lu, որից առաջ վերականգնում են pa և, այդպիսով, ստացվում է LU[SI]PAD(?)—ը:

¹⁷ Šú, քերես, УКН, 280, տող 5—6. 231, տող 9՝ šuki D^Haldise ubarduduni...

հիմքի, նա առաջարկում է *e* նշանը: Ստորև մենք առիթ կունենանք տեսնելու, որ Քյոնիգը չի նկատել այդ նույն բառը Չելբեր-բաղիի իդենտիկ տեքստում, որի փոխարեն ընթերցել է LUšū-[...] -še (Handbuch, 125, երեսի կողմ, տող 25), ինչպես նաև ipš- բառարմատի առկայությունը ուրարտական մի այլ արձանագրության մեջ:

Դառնանք, ռակայն, 33-րդ տողի վերջին նշանի պարզաբանմանը, հետեւվարար նաև LUip-sū-ú-[...] բառի իրական վերջավորության բացահայտմանը:

Այստեղ, մասնավորապես, նկատենք, որ հետազոտողների տեսադաշտից մինչ այժմ, ցավոք, վրիպել է Սարգուրյան տարեգրության կրկնագրի համապատասխան հատվածը, որը համարյա ամբողջությամբ համընկնում է Հաղիի արձանագրության քննարկվող հատվածին: Տեսանելի դարձնելու համար ներքևում բերենք Հաղիի արձանագրության և Սարգուրյան տարեգրության համապատասխան հատվածները.

Հաղիի արձանագրություն

...¹Ar-giš-[ti-se] ¹Ru-sa-a-hi-ni-[še] ^DHal-di-ni-še LÜERUM-še [a-li] ^DHal-di-ni-ni uš-ma-[ši-ni] EN-si-ni-ni... a-lu-uš-me LUGÁL-tū-hi tar-a-g[i] a-ru-ni na-a-ha-a-d[i] LUGÁL-tū-hi-ni-na-a GIŠGU·ZA-[a]... uš-ha-nu-me ^DHal-di-še EN-[še h]u-tu-tú-ú-hi gu-nu-ú-[še] e-ú-e LUip-sú-ú-[...] ¹⁸:

Սարգուրյան տարեգրություն

...¹⁰Sar₅-du-[ri-se ¹Ar-giš]-ti-e-hi-ni-še a-li-e i-[ú ^DHal-di-i]š-me LUGÁL-tu-hi a-ru-ni na-ha-a-di [^{LÜ}AD-ni] e-si-i LUGÁL-tú-hi-ni ^DHal-di-i[š-me uš-ha]-nu¹⁹-ú-ni hu-tu-tú-hi e-²⁰a gu-[nu-še-e] e-²¹a ip-šú-ú-še-e²¹...

Համադրությունից աչքի է զարնում Հաղիի արձանագրության և Սարգուրյան տարեգրության բերված հատվածների արտակարգ նմանությունը: Այս փաստերը կասկած չեն թողնում, որ, նախ, *eue*-ն հանդիսանում է *e'a* = *eia* = *ea*i շաղկապի տարբերակը. այնուհետև, Հաղիի արձանագրության երեսի կողմի 33-րդ տողի վերջում անհրաժեշտ է վերականգնել հենց *še* նշանը, և համապատասխան բառը (վերացական գոյականը) ամբողջությամբ

¹⁸ CICH, XXXIX, 149, երեսի կողմ, տող 14—18, 23—25, 31—33:

¹⁹ Այդ նշանը Մելիքիշվիլին և Քյոնիգը վերականգնում են, մինչդեռ էստամպի լուսանկարի վրա այն պահպանվել է ամբողջությամբ:

²⁰ Այդ նշանի երկրորդ հորիզոնական սեպի փոխարեն տեքստում սխալմամբ փորագրվել է ուղղահայաց սեպ, որի պատճառով՝ ²a-ի փոխարեն փաստորեն թյուրիմացաբար առկա է im (տե՛ս Wolfram von Soden—Wolfgang Röllig. Das akkadische Sil-labar, Roma, 1967, նշան № 236), որը ուրարտական սեպագրերում վանկային իմաստով ընդհանրապես չի հանդիպում, իսկ որպես գաղափարագիր (D «աստված» դետերմինատիվի հետ միասին) նշանակում է «թելերա»:

²¹ CICH, XXX, 129a II+aI, տող 25—20. ip-šú-ú-še-e-ի փոխարեն Ա. Սեյսը և Ֆ. Վ. Քյոնիգը ընթերցում են ^{LÜ}šú-ú-še-e: Այստեղ նախ պետք է նկատի ունենալ, որ ip նշանի ընթերցումը կասկած չի հարուցում, իսկ ^{LÜ}šú-še-ն (սմանը եղջերավոր անասունն) մեր տեքստի հետ առնչություն չունի:

ընթերցել LUip-šú-ú-[še] ձևով: Ոչ էական տարբերություն է միայն այն փաստը, որ Հաղիի արձանագրության մեջ ipšušē-ն հանդես է գալիս LU դետերմինատիվով, իսկ Սարգուրյան տարեգրության մեջ՝ առանց դրա:

Այժմ մի քանի խոսք (LU)ipšušē-ի մասին: Այդ վերացական գոյականը, մեր կարծիքով, իմաստային առումով անմիջական կապ ունի Ռուսա II-ի Քեշիշ-գյուլի հայտնի արձանագրության ipša-dulie (կամ ipša-dulini) բայի հետ²²: Երկու դեպքում էլ, կարծես թե, առկա է միևնույն ipš- արմատը (LUipš-u-še և ipš-a-dulle. հմմտ. LUtasm-u-še և tasm-u-bi):

Ինչպես հայտնի է, ú- «անել», «կատարել» բայահիմքի բարդամբ կազմվող անցողիկ բայերը ուրարտական սեպագրերում լայն տարածում ունեն: Այսպես, օրինակ, ueli «հավաք», «ջողատ» և ueli-du- «հավաքել», šeri «առանձին» և šeri-du- «առանձնացնել», «անջատել», atqana(ni) «զոհ», «զոհաբերություն» և atqana-du- «զոհաբերել»:

Այսպիսով, անդրադառնալով (LU)ipšušē գոյականի և ipša-dulie բայի մեկնաբանությանը, նկատելի է, որ Սարգուրյան տարեգրության և Հաղիի արձանագրության համանման տեքստերում հաղիի աստվածը՝ տերը արքաներին սլարգեել է թագավորություն (իշխանություն)²³, մարտ և ipšušē, ըստ Ռուսա II-ի Քեշիշ-գյուլի արձանագրության մեջ՝ Ալահինի գետի, Ռուսայի արհեստական լճի և դրանց շնորհիվ անցկացված ոռոգիչ ջրանցքի ջրերը պետք է ipša-dulie անեին (լինեին) Ռուսախինիլի քաղաքին:

Ելնելով վերոհիշյալ փաստերից, (LU)ipšušē բառին (վերացական գոյականին) մենք հակված ենք տալու «բարեկեցություն(?)», իսկ ipša-du- բային՝ «բարեկեցիկ դարձնել (^)» մոտավոր իմաստները: Ստացվում է, որ մի դեպքում գերագույն աստված հաղին Սարգուրի II և Արգիշտի II թագավորներին պարգևում է «բարեկեցություն», «բարեկեցիկ կյանք» (իշխանության և մարտի²⁴ հետ միասին), իսկ մյուս դեպքում՝ նորաստեղծ ոռոգիչ ցանցը պետք է բարեկեցիկ դարձներ Ռուսախինիլի քաղաքը:

3. AM նշանի գաղափարագիր ստանդայտությունը

Արգիշտի II-ի Հաղիի արձանագրության հակադարձ երեսի 11—12-րդ տողերում Ծերեթելին ընթերցում է i-na-hi-na-ú-e URUME²⁵-ú-e qar-ú-di...,

²² Դժվար է համաձայնվել գիտության մեջ լայն տարածում գտած այն կարծիքի հետ, ըստ որի Քեշիշ-գյուլի արձանագրությունը վերագրվում է Ռուսա I-ին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ուրարտական արձանագրությունները, Արգիշտի II-ից սկսած, փորագրված են, այսպես կոչված, ասորեստանյան գրելաձևով (ուղղահայաց սեպերի հատում հորիզոնականներով, սեպերի յուրահատուկ ձև և այլն): Փորագրության հենց այդպիսի բնույթ ունի նաև Քեշիշ-գյուլի արձանագրությունը (այդ արձանագրության լուսանկարը տե՛ս CICH, XXXVIII, 140, ipša-dulie բայը տե՛ս տեքստի 32-րդ տողում), ուստի այն, անկասկած, պատկանել է Ռուսա II-ին:

²³ Այսպես ենք թարգմանում hu-tu-tuhi բառը: Հավանաբար նույնն է, ինչ-որ հիշյալ տեքստերում մի փոքր ավելի վերևում հանդես եկող LUGAL-tuhi-ն: Ի. Մ. Դյակոնովը hu-tu-tuhi-ն նույնացնում է խորրիտերեն hut-an-ի հետ և թարգմանում «հաջողություն» (տե՛ս И. М. Дьяконов, УПА, էջ 88):

²⁴ «Մարտի» (gunuše) տակ այստեղ ենթադրվում է թշնամի երկրների դեմ տարած հաղթանակը և նրանց հաշվին ուրարտական պետության սահմանների ընդլայնումը:

Մեկի քիչ լինի՝ i-na-hi-n[a]-[ū]-[e] URU[M]EŠ-ū-[e] am-ú-[...]..., իսկ Քյոնիգը՝ i-na-hi-na-ú-e URUMEŠ-ú-e am-ú-e...

Վերը բերված ընթերցումներից, արձանագրության էստամպի լուսանկարի համաձայն, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ հիմնավորված է Քյոնիգի առաջարկածը, միայն թե այստեղ անհրաժեշտ է որոշ ճշտում մտցնել am նշանի ընկալման մեջ, որի համար Քյոնիգը առաջարկում է վանկային նշանակություն, իսկ մենք (ինչպես կտեսնենք ներքևում)՝ գաղափարագիր:

Հատկանշական է, որ այստեղ առկա է am նշանի միակ դործածությունը բառակազմում ուրարտական սեպագրերում ընդհանրապես: Հայտնի այլ դեպքերում am հնչյունակապակցությունը արտահայտելու համար գործածված է a-ma, a-me, a-mu: Այդ հանգամանքը ակնարկում է, ըստ երևույթին, այն մասին, որ եթե հարկ լիներ am հնչյունակապակցության վանկային վերարտադրության, ապա Հադիի արձանագրության մեջ մենք կունենայինք ոչ թե am-ú-e, այլ, ավելի շուտ, a-mu-e, ինչպես այդ առկա է a-mu-li-mi, ինչպես նաև a-ma-ni-i-gi-di, a-ma-aš-tú-bi և նման այլ բառերի գրության մեջ:

Վերը բերված փաստերը ստիպում են հրաժարվել am նշանի վանկային ընկալումից: Իսկ AM գաղափարագիր առումով ընկալման դեպքում աչքի է զարնում այն կարևոր հանգամանքը, որ inahina-ue URUMEŠ-ue AM-ue արտահայտության մեջ բոլոր երեք դեպքերում էլ առկա է հոգնակի թվի տրական հոլովի -ue վերջավորությունը:

AM (ակկադերեն՝ qarradu) գաղափարագիրը, ինչպես հայտնի է, նշանակում է «խիզախ», «արի», «հերոս»²⁵: Այդ դեպքում inahina-ue URUMEŠ-ue AM-ue²⁶ արտահայտությունը կարելի է թարգմանել «այս քաղաքներին խիզախ (հերոս)» կամ «այս խիզախ (հերոս) քաղաքներին»:

Արձանագրությունը, ըստ երևույթին, նկատի ունի այն քաղաքները (բնակատեղիները), որոնք ստեղծվել էին Վանա լճից հյուսիս, Արձեշի շրջանում և հարակից տերիտորիաներում, այստեղ ոռոգիչ լայն ցանցի անցկացման շնորհիվ:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հիշյալ արտահայտության շարահյուսական կառուցվածքը ևս խոսում է URUMEŠ-ue AM-ue «քաղաքներին (բնակատեղիներին) հերոս» (կամ, ժամանակակից ընկալմամբ, «հերոս-քաղաքներին») ընթերցման օգտին (հմմտ. E.GAL badusi «ամրոց հոլակապ», qudulani suhinaši «տաճար(») նոր» և այլն):

4. Ալիալա անհալո ֆաղաֆը

Ուրարտուի պատմության, մասնավորապես տեղագրության ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հադիի արձանագրության հակադարձ երեսի 18—19-րդ տողերը, որոնց ընթերցումը, սակայն, մասնագիտական գրականության մեջ տեղիք է տվել զգալի տարակարծությունների: Առաջարկված ընթերցումներից և ոչ մեկը, ցավոք, հիմնված չէ տեքստի ճշմարտացի վերարտադրության վրա, հետևաբար, ի վիճակի չէ արտահայտելու նրա իրական բովանդակությունը:

²⁵ René Labat, Manuel d'épigraphie akkadienne, Paris, 1959, նշան № 170.

²⁶ հմմտ. mukahint-e URUšani-e hubi-gi. VKEI, 281—Handbuch 126, տող 16—17.

Հաղիի արձանագրության մեզ հետաքրքրող հատվածը Մերեթելին ընթերցում է ¹Ar-giš-ti-še a-li ME²¹ NARUKa-a-li-[i]-al-a-m[u], Մելիքիշվիլին՝ ¹Ar-giš-ti-še a-li A[ME]Š(?) [D URU^(?)a(?)]-la(?)[...]al a[...], Քյոնիգը՝ ¹Ar-giš-ti-[š]e a-li a-l[i] ¹DKa-a-la²⁷-[...]al(?)²⁸-a-ni, Իսկ Կարագյոզյանը՝ ¹Ar-giš-ti-še a-le A[ME]Š [D URUA-l[i]-a]-ka-a-[i]²⁹:

Արձանագրության էստամպի լուսանկարի համաձայն, որը զետեղված է ուրարտական արձանագրությունների կեման-Հաուպտի հրատարակած ժողովածուում, վերը բերված ընթերցումների դեմ ծագում են մի շարք առարկություններ: Դրանք վերաբերում են, առաջին հերթին, 19-րդ տողի տեքստին, մասնավորապես, քաղաքանվան ընթերցմանը:

Հենց սկզբից ասենք, որ մենք միանգամայն համաձայն ենք տեքստի 18-րդ տողի՝ ¹Ar-giš-ti-še a-li AMEŠ ձևով ընթերցմանը: Այստեղ, անկասկած, ամեն ինչ իր տեղում է, բացառությամբ այն բանի, որ վերջին MEŠ նշանից արձանագրության էստամպի լուսանկարի վրա պահպանվել են միայն երկու հորիզոնական սեպեր (չգիտես ինչու ամբողջությամբ բացակայում է նաև սկզբի ուղղահայաց սեպը, երբ տեքստի այս մասը բոլորովին տուժած չէ):

Ինչ վերաբերում է արձանագրության հակադարձ երեսի հաջորդ, 19-րդ տողին, ապա այստեղ առարկությունները ծագում են հենց առաջին նշանից սկսած, քանի որ, մի դեպքում, այն ընկալվում է որպես գաղափարագիր, իսկ մյուս դեպքում՝ որպես դետերմինատիվ:

ԻԾ-ը դետերմինատիվ են համարում Մերեթելին և Քյոնիգը, ըստ որում այդ նշանի գաղափարագիր, թե դետերմինատիվ առումով ընկալումը անմիջականորեն կապված է նաև հաջորդ նշանի ճիշտ կամ սխալ ընթերցման հետ, որը, ինչպես հայտնի է, Մերեթելին և Քյոնիգը համարում են ka, իսկ Մելիքիշվիլին, վերջերս նաև Կարագյոզյանը՝ դետերմինատիվ URU «քաղաք» («բնակատեղի»):

Մեր կարծիքով, արձանագրության հակադարձ երեսի 19-րդ տողի երկրորդ նշանի (ԻԾ-ից հետո) իբրև ka ընկալման համար ոչ մի հիմք չկա. այստեղ բացակայում են ներքին հորիզոնական երկար սեպը՝ երկու ուղղահայաց սեպերի տակ և վերին կարճ հորիզոնականը՝ վերոհիշյալ ուղղահայացների միջև: Այդ դեռ քիչ է. նույնիսկ համապատասխան տեղ էլ չկա այդ, իբրև թե տուժած, հորիզոնական սեպերի համար, որոնք այնքան անհրաժեշտ են ka նշանի համար³⁰: Արձանագրության էստամպի լուսանկարի համաձայն, ընդհակառակը, այստեղ URU «քաղաք» ընթերցումը ոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

URU-ից հետո տեքստում պարզ ընթերցվում է a: Մելիքիշվիլու այդ մասին ունեցած կասկածները, ինչպես մեզ թվում է, ավելորդ զգուշության ար-

²⁷ Այստեղ Քյոնիգը չի բացառում նաև [l] ընթերցման հնարավորությունը:

²⁸ Ըստ Քյոնիգի, al-ի փոխարեն հնարավոր է նաև ka:

²⁹ Հ. Հ. Կարագյոզյան, Սեպագիր աղբյուրների Ալիա քաղաքը, ՀՍՍՀ ԳԱ «Արարեր» (հաս. դիտ.), 1975, № 4, էջ 93:

³⁰ Մերեթելու այդ տեսակետը, առանց փաստական նյութի ստուգման, իր ժամանակին ընդունել է նաև սույն հոդվածի հեղինակը: Սակայն այժմ այդ երևույթը մեզ մոտ տեղիք է տալիս միայն խորին փաստանքի, քանի որ դրա վերջնական արդյունքը եղել է Կալիալա (") կեղծ գետանունը: Տե՛ս Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту (այսուհետև՝ ЗСУ), Երևան, 1964, էջ 35 (և ծան. 80), 37, 58, 108 (և ծան. 28):

դյունք են: Հենց դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ *a* նշանի ընթերցման ձգրություն մեջ լրիվ համոզմունք ունեն Մերեթելին, Քյոնիգը և Կարագյոզյանը:

Զգալի տարակարծություններ են հանդես գալիս այդ տեղանվան հաջորդ նշանի ընթերցման մեջ: Այստեղ Մելիքիշվիլին հարցականով ընթերցում է *la*, Քյոնիգը՝ տեքստում *la*, իսկ ծանոթագրության մեջ՝ *l[i]*: Այս վերջին *li* ընթերցումը առաջարկում է նաև Մերեթելին, սակայն առանց այդ նշանի աջակողմյան վերականգնման:

Այստեղ մեր ուշադրության առարկան հանդիսացող նշանի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, ճիշտ է, նրա ձախակողմյան մասը (որ մի շարք մասնագետներ ընթերցում են որպես *la*) ավելի լավ է պահպանվել, սակայն արձանագրության էստամպի լուսանկարի վրա նկատելի է նաև նշանի շարունակությունը՝ «անկյունաձև» և ուղղահայաց սեպերի հետքերը: Հետևաբար, այդ հարցում արդարացի են այն հետազոտողները, որոնք մեզ հետաքրքրող նշանի համար առաջարկում են *li* ընթերցումը:

Հիշյալ նշանից հետո, ինչպես հայտնի է, մասնագետները տեքստում կա՛մ վերականգնում են *i* (Մերեթելի), *a* (Կարագյոզյան), կա՛մ էլ առանց ընթերցման տեղ են թողնում տուժած մեկ նշանի համար (Մելիքիշվիլի, Քյոնիգ): Սակայն մեզ թվում է, որ այստեղ ոչ մի նշան չի եղել. նշանների միջև եղած տարածական չափերը ևս վկայում են այդ մասին:

Որոշակի տեսակետ չկա նաև հաջորդ նշանի ընթերցման հարցում. Մերեթելին և Մելիքիշվիլին համոզված առաջարկում են *al*, Քյոնիգը՝ կասկածանքով *al* կամ *ka*, Կարագյոզյանը՝ առանց տարակուսանքի *ka*:

Այս կապակցությամբ պետք է նկատել, որ այն հետազոտողները, որոնք դիտարկվող նշանի տակ հակված են տեսնելու *ka*, ստիպված են եղել սեպախմբի սկզբից անպայման վերականգնել տեքստում գոյություն չունեցող մեկ հորիզոնական սեպ ևս: Բայց դա էլ բավական չէ *ka* նշանի ընթերցման համար, քանի որ այդպիսի դեպքում դարձյալ մի նոր անհրաժեշտություն է ծագում՝ հորիզոնական փոքր սեպի՝ երկու ուղղահայացների միջև: Իսկ իրականում արձանագրության էստամպի լուսանկարի վրա տվյալ տեղում հստակ երևում է «անկյունաձև» (բայց ոչ հորիզոնական) սեպ: Ուստի այստեղ *ka* նշանի ընթերցումը բացառվում է: Հետևաբար, այդ նշանի սկզբում ևս մեկ հորիզոնական սեպի վերականգնումը (ներանում առկա, կրկնում ենք, «անկյունաձև» սեպի դեպքում) զուրկ է որևէ հիմքից:

էստամպի լուսանկարի վրա *al*-ից հետո առկա է *a* նշանը³¹, որի ընթերցումը ոչ մի կասկած չի հարուցում մասնագետների մոտ: Դրան հակառակ, 19-րդ տողի վերջին նշանից պահպանվել են միայն սկզբնական մասի ոչ հստակ հետքերը, որոնց հիման վրա Մերեթելին ընթերցում է *m[u]*, Քյոնիգը՝ *ni*, Կարագյոզյանը՝ *i*: Նկնելով 19-րդ տողում եղած արտահայտության

31 *al*-*a* ընթերցման կապակցությամբ Կարագյոզյանը (տե՛ս նրա նշված հոդվածը, էջ 92) այդպիսի դեպքերում ավելի շուտ ենթադրում է *a*-*la* գրեկաձևը: Այդ պատճառով էլ (բայց ոչ սեպագիր տեքստի հիման վրա) *al* նշանի փոխարեն նա ընկալում է *ka* (իրը թե *ka* (?) - *a*): Սակայն այս տեսակետը չի հաստատվում ուրարտական սեպագրերի փաստական նյութերով: Ընդհակառակը. և՛ *a*-*la*, և՛ *al*-*a* տիպի վանկային անցումները կողք-կողքի հանդիպում են արձանագրություններում:

բառակապակցությունից, մեզ թվում է. որ այստեղ բացակայում է սևոական հոլովի i ցուցիչը³²:

Այսպիսով, վերը ասվածի հիման վրա, Արգիշտի II-ի Հադին արձանագրության հակագարձ երեսի 18—19 տողերի համար կարելի է առաջարկել հետևյալ գիտական տառագարձումը և թարգմանությունը.

(18) 'Ar-giš-ti-še a-li A|M|E|Š](?)³³

(19) [D URUA-li-al-a-i](?)³⁴

«Արգիշտին ասում է. ջրերը Ալիալա (քաղաքի) գետի»:

Տվյալ գեպքում մենք գործ ունենք առայժմ անհայտ Ալիալա քաղաքի և, ըստ երևույթին, համասուն գետի հետ, որի հարուստ ջրային պաշարները օգտագործվել են ոռոգիչ լայն ցանցի՝ արհեստական լճի (šue asuahina) և ջրանցքի (PA₅=ուրարտ. pili) ստեղծման համար:

Հատկանշական է, որ Հադին արձանագրության տվյալների համաձայն, Ալիալա քաղաքի գետը հանգիսացել է միակ աղբյուրը՝ Արճեշի շրջանում և հարակից տերիտորիաներում ոռոգման ցանցի ու ցանքադաշտերի, պտղատու և խաղողի այգիների ստեղծման համար: Ոռոգիչ այդ ցանցի ոլորտում, արձանագրության համաձայն, Ալիալա քաղաքի հետ միասին ընգրկվել են, ըստ երևույթին, նաև Արգիշտիխինիլի քաղաքը³⁵, Կուրիակա և Արտարապշա մարզերը:

УТОЧНЕНИЯ В УРАРТСКОЙ КЛИНОПИСИ

Н. В. АРУТЮНЯН

(Резюме)

В статье уточняются чтение и интерпретация некоторых отрывков известной дефектной надписи урартского царя Аргишти II, найденной в с. Хаги (район Арчеша на северном побережье оз. Ван). Прежде всего рассматривается текст формулы благожелания указанной надписи, вносятся поправки в его чтение и толкование. Выясняется, что этот текст во многих своих деталях совпадает с подобной формулой урартской надписи Русы II из Кармир-блур (Тейшебаини). На основании этой и не-

32 Ժիշտ է. մեր այս ընթերցումը ձևականորեն համընկնում է Կարագյոզյանի առաջարկածին, սակայն ելակետերը միանգամայն տարբեր են. մի գեպքում Ալիալա քաղաքանվան հոլովական վերջավորության (ն. Հարությունյան), իսկ մյուս դեպքում՝ Ալիա (") քաղաք և -ka (i) (?) հետագրություն (Ն. Կարագյոզյան):

33 Արձանագրության էստամպի լուսանկարի վրա պահպանվել են միայն երկու հորիզոնական սեաներ:

34 Ինչպես հաստատվեց, այս i-ի փոխարեն U. Մերեթելին առաջարկում է m[u]: Այդ գեպքում, ըստ երևույթին, չի բացառվում առ նշանի գաղափարագիր MU (ակկադերեն՝ šum) «անուն» ընկալումը: Հմտ. URUAHala-MU (= URUAHala-tini) և I'DDainala-tini. Հմտ. նաև Н. В. Арутюнян, ЗСШ, էջ 35 և ծան. 80:

35 Այս քաղաքը, հասկանալի է, ոչ մի կապ չունի Արգիշտի I-ի կողմից Արաքսի ձախափին, Արմավիր, Սուրբ Դավիթ բլուրների վրա ու նրանց ստորոտներում ավելի վաղ ժամանակներում հիմնադրված մյուս քաղաքական համայնություն կենտրոնի հետ:

которых других надписей восстанавливаются или уточняются недостающие отрывки формулы благожелания в надписи Аргишти II.

Подробно разобран также другой отрывок надписи из Хаги, установлено его разительное сходство с соответствующим отрывком Сарду-ровской летописи, на основании чего сочтены неоправданными существующие чтения LUipšue «помощник», тем более LU[SI]PAD «пастырь», и вместо них предложено чтение LUipsuše. Одновременно сделана попытка выяснить значение данного слова — «благоденствие (?)» и установить его отношение к глаголу ipša-du- «благоденствовать (?)». Далее приводится идеографическое чтение знака AM (аккадск. qaṣṣadu) «храбрый, мужественный», «доблестный», «герой», а также отвергаются ранее предложенные разночтения одного топонимического названия (река Калиала, город Алала (?), река Калалани (?), город Алиа) и вместо них устанавливается название неизвестного до сих пор города Алиала.